







«Յիսուս ըսաւ, ես եմ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍՈՐ. ան որ իմ ետեւէս
կուգայ, խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց լոյսը պիտի
ունենայ»:—ՅՈՎՀ. 8.12:

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԹԵՐԹ

ՏԱՐԻ Դ.

ՅՈՒՆՎԱՐ 30, 1920

ԹԻԻ 1-2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՀԱՅԵՐԷՆ ԲԱԺԻՆ

Խմբագրականներ.— Բացատրութիւն մը, Երկու Մաշեր

Յօդուածներ.—

Քրիստոնէական Ազգասիրութիւն.....Մ. Մ. Այճեան

Աղօթքով Գործեր Կը կատարուին.....Ս. Տ. Կօրտըն

Ս. Գրոց Ամենէն Զարմանալի Համարներէն

մին.....Բ. Ս. Լեւոնեան

Գոհաբանութեան Օրուան Խորհրդածութիւններ

Գալուստ Մ. Այճեան-Լուսինեան

Ազգային Պատուիրակութեան Կոչեր.—

Գերագոյն Ճիշդի մը Պէտքը

Կոչ Հայ-Ամերիկեան Զինուորներու

Հոգեւոր Կեանք.—

Փշրանքներ.....Արտասպառած

Խաչէն Զայներ (Ոտանաւոր)Գր. Հ. Գալուստեան

Միսիոնարական Անկիւն.—

Լուրեր ասկէ անկէ

Բ. ԹՈՒՐԿԵՐԷՆ ԲԱԺԻՆ

«Ծնունդ Մէլէի».....Փրօֆ. Հէնրի Վէն Տալք

«Լուսաւորիչ»-է Պիւր Խիթապ.....Մ. Բ. Պալեան

THE LOUSAVORICH

440 SOUTH DEARBORN STREET, CHICAGO, ILL. ROOM 630

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԹԵՐԹ

Խմբագիր եւ Հրատարակիչ՝
Մ. Մ. ԱՅՃԵԱՆ

Բաժնեգիր, Տարեկան \$1.00

"LOUSAVORICH"

RELIGIOUS SEMI-MONTHLY

Editor and Publisher:
M. M. AJIAN

Subscription, \$1.00 per year, in advance

Address: 440 South Dearborn Street Chicago, Ill. Room 630

Vol. IV.

January 30, 1920

No. 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Յօդուածագիրներէն կը խնդրուի որ թուղթին մէկ կողմը գրեն, մեկամով գրեն, ընթեռնելի կերպով գրեն: Բոլոր գրողները շրջապատու են «Լուսաւորիչ» հասցէին:

Բաժանորդներ եւ բարեկամներ դրամ կրնան շրջապատու չէքով կամ այն ծիծեղող որ իրենց համար ամենէն չարմար եւ դուրին է:

«Լուսաւորիչ» Հրատարակչական Ընկերութիւն»ը ձեռքի ծառայելու պատրաստ է ոեւէ տպագրական գործերու համար:

Հոգեւոր եւ կրօնական գիրքեր եւ տետրակներու համար դիմեցէ՛ք Լուսաւորիչ:

Հայերէն, Անգլիերէն, Յունարէն եւ ուրիշ լեզուներով Սբ. Գիրքեր ալ կըրնաք ապսպրել:

Շատ յարմար գնով ծանուցումներ կընդունինք: Գրեցէ՛ք:

Պոլիս, Հայաստան եւ Կիլիկիա, ամենէն աւելի շրջապատու Հայ Թերթն է «Լուսաւորիչ»ը: Ինչո՞ւ համար բարեկամներու եւ ազգականներու մասին ծանուցում մը չեն ղրկեր: Շատ աժան ճամբայ մ'է տեղեկութիւն ստանալու համար:

ՄԵԶԻ ՂՐԿՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ.

Մարաշէն՝ «Ճշմարտութիւն»:

Այնթապէն՝ «Ռազվիրայ» Հայերէն եւ Հայատառ Թուրքերէն:

Այնթապէն՝ «Րահնիւմ» Թուրքերէն:

«ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»Ի ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ որոնց կրնաք յանձնել դրամ «Լուսաւորիչ»ի համար.—

Կ. ՊՈԼԻՍ. Պր. Մեհրան Նուրեհան, Մարթէօ Խան, Թարագճըլար:

ԳՕՆԵԱ. Փրոֆ. Պետրոս Քարծայր, Ճէնանեան Գօլէճ:

ԱՏԱՆԱ. Գալուստ Մ. Այճեան, Interpreter, 2-13 London Regiment Christian Camp, Adana, Cilicia.

ՀՈՒՄԱՆՈՐԻՉ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԹԵՐԹ

ՏԱՐԻ Դ.

ՅՈՒՆՎԱՐ 30, 1920

ԹԻԻ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Այս թիւով «Լուսաւորիչը» իր 4րդ տարին կ'սկսի. եւ կուզայ ըսելու Շնորհաւոր նոր տարի: Բայց եւ այնպէս ան ձեռնբերողութիւնը խնդրելով կը մօտենայ բացատրութիւն տալ թէ ինչու փոխանակ 24 թիւի անցեալ տարի միայն 12 թիւով ձեռն աչմէլեց: Ամեն ջանք թափեցինք բայց անկարելի եղաւ աս տպագրատան ալ եւ այլ ղեկավարութիւններու պատճառաւ: Եւ վերջին ամիսը, Դեկտեմբերի ամիսին ձեռագիրը բոլորովին պատրաստ յանձնուած էր տպագրիչին բայց անոր Հիւանդութիւնը եւ շատ մը ուրիշ արեւելքներ անկարելի դարձուցին մեր այդ փափաքին գոհացում տալ:

Եւ ամէն մի բարեկամ վստահ կրնայ ըլլալ թէ Խմբագրութիւնը կարելի եղած ամեն ջանքը պիտի թափէ թէ որ պէտք ըլլայ մինչեւ իսկ մեր յատուկ մամուլը ունենալով, 1920ը «Լուսաւորիչ»ի ամենեն յաջող եւ պայծառ տարին Հանդիսացնել:

Աւելի շատ յօդուածագիրներ եւ գործակիցներ պիտի ունենանք: Եւ անոր պարունակութիւնը այնպէս ճոխացնելու ջանք պիտի ըլլայ որպէսզի, ճոխ սեղանի մը առջեւ նստող բարեկամներու նման «Լուսաւորիչ»ի բարեկամները Աստուծոյ չընորհաց սեղանէն ուտեն եւ կշտանան: Ասոր համար ձեռն աղոթքին եւ աջակցութեանը կարօտ կզգայ Խմբագրութիւնը:

Շնորհակալ ենք այն շատ մը բարեկամներէն, որոնք Ասիայէն, Եւրոպայէն,

Աֆրիկէն եւ Ամերիկայէն մեզ քաջալերեցին:

Շնորհակալութիւն մեր ազնիւ գործակիցներուն որոնք ամեն կերպով մեզի բառին լման իմաստովը գործակից եղան:

Ձեր սերն է նաեւ անկեղծ դնահատական ընդունելութիւնը որ կընծայէ «Լուսաւորիչ»ի խիստ համեստ ջանքերուն որ մեզ կը քաջալերէ: Եւ Կ'ստիպէ որ յառաջ ընթանալով հակառակ ամէն խոշնդոտի: Եւ «Լուսաւորիչ»ը իւր յաւանքը Ամենակարողին շնորհաց ապաւինելով պիտի վազենք:

Մեր դիրքը եւ նպատակը նոյնը պիտի ըլլայ եւ «Լուսաւորիչ» պիտի մնայ Հայուն ազատ կրօնական թերթը:

Շատ մեծ յոյսերով նոր տարին կ'սկըսինք եւ մեր յաջողութիւնը ձեռն գործակցութեան չափովը պիտի ըլլայ:

Մնամ անկեղծաբար

Մ. Մ. ԱՅՃԵԱՆ

Խմբագիր եւ Հրատարակիչ



ԵՐԿՈՒ ՄԱՀԵՐ

Դեկտեմբերի վերջին շաբաթ օրը Շիգակոյի մէջ Հողին յանձնուեցաւ Հայու մը մարմինը: Եւ օր մը վերջը, Կիրակին, Ուօքէլընի մէջ Հայ երիտասարդ մը իր բարեկամներուն սիրտը կսկիծով լեցուց իր մահովը: Որչափ որ իմացայ երկուքին Համար ալ սա բանը կը շեշտուէր. Անոնք ժամանակէն ուր դիմեցին բժշկի:

Առաջինին բարեկամներէն մէկը անոր դադաղին գլուխը կեցած կըսէր, « Ըսի իրեն որ Տօգթօրի դիմէ բայց խօսքիս մտիկ

չըրաւ եւ հոս հասաւ»: Հալերուս մէջ ա- սիկա սոսկալի սովորութիւններէն մէկն է, մինջեւ մահուան դուռը չը հասնինք բժիշ- կի դրամ տալ չենք ուզեր: Եւ թէ որ անոր սեմին վրան ալ տողար մը տուինք կ'ակն- կալենք որ ան մեզ գերեզմանէն դուրս բե- րէ: Մէկ կրամ ախտը արդիւնէլ Հարիւր փառնոտ դեղէն աւելի զօրութիւն ունի կ'ըսուի: Եւ շիտակ չ'երեւար մեզի քաջա- լերեւ Հայութիւնը այս իրենց քէշ սովո- րութեան մէջ թող տալով որ փոխանակ տողար մը դրամ ծախսելով բժիշկին դի- մելու, 2 սէնթ նամակով մը թերթերու սիւնակներու միջոցաւ առանց ծախսի «բանասէ» մը գտնեն իրենց ցաւերուն հա- մար:

Այսոր Ամերիկայի մէջ չես կրնար գըտ- նել պզտիկ գիւղ մը իսկ ուր մէկ կամ աւե- լի բժշկներ չի կենան. ինչ է պատճառը որ անոնց չեն դիմեր ժամանակին: Կարելի է թէ օր մ'ալ քու բարեկամդ դագաղիթ առ- ջեւ կեցած ըսէ «Շատ ուշ դիմեց բժշկին»:

Եւ արդ այս որչափ ճշմարիտ է մեծ բազմութեան մը համար, որոնք մեղքի ախտովը վարակուած չեն դիմեր անոր որ կրնայ բուժել: Այս օր չէ վաղը, կամ ու- րիշ օր մը, շատ մը յիմարները գերեզմա- նատուն եւ դժողքի առաջնորդող ճամբայ եղած է: Յիսուս այսոր քեզ կրնայ բուժել: Յիսուս այսոր քեզ կուզէ բուժել: Ով մե- ղաւոր Անոր այսոր ին՞չու չըդիմես: Վա- ղը շատ, շատ ուշ կրնայ ըլլալ:



Հետեւեալը վեր. Մ. Մ. Այնեանի
Հոկ. 26 1919ի Կիրակի Շիգակոյի Հայ Ա-
ւետ. քեմէն խօսած մէկ քարոզէն արտա-
ւայտուած է:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մարդ օժտուած է շատ մը բնազդուն- ներով: Անոնց զօրաւորագոյններէն մէկն է իրենները սիրել: Սիրել ի՞նչ անձը ի՞նչ տանիքը. ի՞նչ բարեկամները. ի՞նչ Ազգը: Յիսուս երբ ընկերը սիրելու դասը կը սոր-

վեցնէր, այն բնական սկզբունքը նշմարե- լով եւ ընդունելով ըսաւ. «Քու ընկերդ ՔՐԻՍՏ անձիդ պէս սիրէ»: Առանց անոր ան- կարելի է մարդկութեան շարունակութիւ- նը երկրագունդիս վրայ, անասուններն իսկ պէտք է շարժին եւ կը շարժին նոյն բնազդով պահելու իրենց գոյութիւնը: Մարդուս այնքան բնական է ազգը սիրել որչափ արծիւին թեւ առնել օդին մէջ կամ ձուկին լողալ ջուրին մէջ:

Նախ պէտք է հասկնալ թէ Քրիստոնե- եայ մը — եւ ճշմարիտ քրիստոնեային վրայ է խօսքս — վերոյիշեալ բնազդու- մով օժտուած է եւ աւելորդ բան մ'ալ ու- նի այսինքն իրենցնէն զատ ուրիշներն ալ սիրել: Չոր օրինակ ծառաները, այլազ- գիները, թշնամիները եւն: Ոչ քրիստոնե- եային համար այս վերջինը անբնական բան մ'է եւ կը պակսի անոր մէջը այդ ոչ- ժը: Յիսուս սիրեց իր (այսինքն Հրեայ) ազգը անոր համար մեռնելու աստիճան. բայց երբ նոյն ազգը օտարներու միացած իր սուրբ մարմինը խաչափայտին վրայ գամեցին Նա անոնց համար աղոթելու ամ- բնական զօրութիւնը ցոյց տուաւ — Հայր ներքէ անոնց. որովհետեւ չեն դիտեր թէ ինչ՞ կ'ընեն»: Քրիստոնեան այդ հոգիով ալ օժտուած է:

Բայց հոս պէտք է նկատել թէ Յի- սուսի հոգին ունենալ մարդը բնական ոյ- ժերէն կամ բնազդուններէն չի զրկեր. ալ աւելի Քրիստոսի հոգին բնական ոյժերը կը նուիրագործէ կ'առաջնորդէ եւ կը գոր- ծածէ բարձրագոյն, Աստուածային սկզբ- րունք եւ նպատակներու համար: Քրիս- տոնեան նուազ մարդ չէ քրիստոնեայ ըլ- լալուն համար. ընդհակառակը ան բնա- կան մարդ եւ աւելի բան մ'է: Իսկ ոչ քրիստոնեան չունենալով այն աւելին որ քրիստոնեան ունի, չի կրնար հասկնալ եւ զնահատել քրիստոնեային դիրքը: Ասկէ կը ծագին անթիւ անհասկացողութիւններ քրիստոնեային եւ ոչ քրիստոնեային մէջ:

Այս է պատճառը որ երբեմն նեղմիտ- ներ կը խորհին թէ անհատ մը քրիստոնե- եայ ըլլալով եւ ըլլալուն համար ազգա-

սէր չէ եւ չի կրնար ըլլալ: Իբր թէ ոչ քրիստոնէութիւնը ազդակ եղած ըլլար ազգասիրութեան: Ասիկայ զրպարտութիւն մ'է բացարձակապէս: Եւ այսպիսի ստու-
թիւն մը յղանալու կարողանալու համար քրիստոնէութեան թշնամիներուն պէս եւ անոնց չափ կոյր ըլլալու է մարդ: Երե-
ւակայել թէ քրիստոնեայ մէկը չը սիրէր իր զաւակները արովհետեւ ուրիշներու զա-
ւակներն ալ կը սիրէ, թէ չը սիրէր իր բա-
րեկամը որովհետեւ իր թշնամիները կը սիրէ. թէ չը սիրէր ի՞նչ ազգը որովհետեւ ամբողջ աշխարհը կը սիրէ եւ ամբողջ աշ-
խարհի համար կ'աղօթէ եւ կը գործէ... Ի՞նչ խելք...

Քրիստոնեան ազգասէր է. ան ինքնա-
յայտ ճշմարտութիւն մ'է. եւ այս է պատ-
ճառը որ անոնք միշտ փողը ձեռքերնին,
չեն պտտեր հոգակելու իրենց ազգասիրու-
թիւնը: Բայց քրիստոնէութեան ազգասի-
րութիւնը քիչ մը աւելի մօտէն քննելէ ա-
ռաջ հասկնալ պէտք է որ քրիստոնեայ ազ-
գասէրը Ծովինիզմ ըստած աղմկալի ազ-
գամոլութիւնը ազգասիրութեան հոմանիշ
չի նկատեր: Զօր օրինակ ան.

Նեղմիտ կուսակցամուրփիւն մը ազ-
գասիրութիւն չի փանջնար: Մինչ արտա-
քին թշնամիները ամեն կողմէ մեզ կը նե-
ղեն եւ ամեն տեսակ քաղաքական էնթրի-
փաներով Հայը իր ժառանգութենէն աւե-
լի երկայն տարիներ զրկել կը ջանան, և
որոնց դէմ գործածելիք մեր ամենէն ազ-
դու գործիքը Միութիւն եւ միաբանութիւն
է, պակաս չեն կուսակցամուրներ որ իրենց
կուսակցութեան փրօփականտի յաջողու-
թեան համար ազգին բարձրագոյն բարի-
քին և բազմին հետ կը խաղան: Ո՛վ յիմար
ինչու չես հասկընար թէ քու կուսակցու-
թիւնդ որչափ ալ բարի, ազգօգուտ եւն.
եւն. ըլլայ, վերջապէս կրնա՞յ գործած-
ուիլ միմեկի ազգին կեանքին մէջը: Եթէ
ազատ եւ միացեալ Հայաստան մը չ'ու-
նենանք քու կուսակցական գործը մէկ
սէնթ չ'արժեր: Կուսակցամուրփիւն ալ
մոլութիւն մ'է. եւ մոլի մարդուն համար
զաւակ, կին, եղբայր, քույր, հայր եւ

մայր, ազգ ու երկիր Հինգ վայրկեանին
մէջ զոհել կարելի է իր անձնական տեն-
ջերու չափեցման սիրոյն: Ան իր դրամն ալ
չի խնայեր: Զոր օրինակ Գինեսմուր. ան
որ զինիի մոլին է պատիւ եւ ընտանիք,
դրամ ու կեանք կը զոհէ Բագոսի սեղանին
վրայ: Միթէ ուրիշ ինչ կերպով կարելի
է: Լին, (Մէսէչուցէթսի), Փրավիտէնս,
(Բօդ Այլէնտի). եւ տարբեր տեղեր կու-
սակցական կռիւներ. որ ազգին անպատ-
ուութիւն կը բերեն, և Հայուն դատին վը-
նաս կը հասցնեն այսպիսի խիստ կարե-
ւոր ժամանակի մը մէջ: Ազգասէր պարոն-
ներու սարքած Լինի ժողովին վրայ ներ-
կայ մը կուսակցական թերթիմը մէջ սա-
պէս կը գրէ. «Ահա սրահին աթոռները օ-
ղին մէջ պարել սկսան...: Սրահին ելեք-
տրական ջահերուն ապակիները փշրուե-
ցան, խաւարը տիրեց, արիւնը հոսել
սկսաւ...: Ոստիկանը տարճանակը հա-
նելով՝ սրահին պատուհանէն դուրս օղին
մէջ պարպեց օգնութիւն կանչելով: Քա-
ղաքին ոստիկանութիւնը սեւ սեւ կառքե-
րով հոն հասաւ. ամբողջ Հասարակութիւ-
նը փողոցին երկայնքէն իվեր խոնուեցաւ,
եւեքտրաչարժ կառքեր կանք առին, եր-
թեւեկութիւնը արդիւրեցաւ: Սրահին մէջ
ախորամարտը կը շարունակուէր, գլուխ-
ներ կը ճեղքուէին, թեւեր կը կորտրտուէ-
ին»: Եւ ի՞նչու: Ազգին սիրոյն: Խեղճ
ազգ: Սիրելի եւ սգաւոր Մայր Հայաս-
տան, աս ալ քու բաժինդ պիտի ըլլար, որ
զաւակներէդ տմանք կուսակցական մոլու-
թեամբ յարեցան կը կուռէին Քու սի-
րոյդ...:

Քրիստոնեան կուսակցութեան կարե-
ւոր դերը կը հասկընայ ազգի մը կեանքին
մէջ. բայց եւ այնպէս ան դեռ կուսակ-
ցամուրփիւնը ազգասիրութիւն անուանե-
լու մակարդակին չէ ստորնացած:

Աւելին կայ. Քրիստոնեայ ազգասէ-
րը իր օգտակար սեպած համոզումները
տարածելու կը ջանայ, բայց եւ այնպէս
եթէ չի կրնար իր եղբայրը համոզել դա-
շտնը իր օգնութեան կանչելու չափ մար-
դասպան եւ ոճրագործ չ'ըլլար: Ոչ ալ ի-

լենց փրօփականտին դրամը չը գործածող Հարուստ եղբայրները «բզիք, բզիք, բզբ-սեկ» ու փրիստփայութեան կը Հաւատայ:

Քայլ մ'ալ անդին երթամ, Քրիստոնեայ ազգասէրը վրէժխնդրութիւնը ազգասիրութեան հետ երբեք չի շփոթեր: Անհատը վրէժխնդիր կրնայ ըլլալ առանց ազգասէր ըլլալու: Աւելին կայ. վրէժխնդիր մը ազգին բարձրագոյն ուրիշ առաքելութիւնները զոհելով կրնայ յառաջանալ այդ ուղղութեամբ: Յանձառորը պատժել օրէնքին գործն է, բայց վրէժխնդրութեան արիւն ծծել կը պատկանի գաղանային բնազդներու ստորնադոյն խաւերուն: Քանի մը օր առաջ Կիլիկիոյ Հայ կամաւորներէն Լէօթէն. Պրն. Շիշմանեան Հայ զինուորներու կեանքէն պատմած ատեն ըսաւ թէ, բնաւ երբեք չէ Հանդիպած Հայ զինուորի մը որ անպաշտպան, եւ իր գործին ետեւը եղող Թուրքի մը յարձակի Վրէժխնդրութեամբ Համար: Լէօթ. Շիշմանեան Հայ զինուորին ասկէ մեծ Քօմիլիմամ մը տալ չեր կրնար:

Ազգասէրը ազգը սիրող մէկն է. եւ ով գիտէ սիրելու գեղարուեստը քան Աստուածասէրը: Աստուած սէր է եւ ան Աստուածը ճշմարիտ սէրը չը գիտեր, Հետեւաբար ճշմարիտ սիրով ալ սիրել անկարող է: Ինչպէս յիշեցի ճշմարիտ քրիստոնեան ճշմարիտ ազգասէր մ'է. եւ Սուրբ Գիրքը եթէ քննենք այս տեսակետէն զարմանալի յայտնութիւն մը պիտի ըլլայ շատերուն:

1. Երբեք դիտած էք որ Սուրբ գրոց պատմութիւնը կարգ մը Հայրենասէրներու կամ ազգասէրներու պատմութիւնն է: Հին Կտակարանին ամենէն երեւելի առաջնորդները ազգասէրներ էին: Եւ անոնց մի քանի Հատին անունը յիշել իսկ պիտի Համոզէ Սուրբ Գրոց ուսանողը ասոր ճշմարտութեան: Զոր օրինակ, Մովսէս, Յեսու, Քաղէփ, Սամուէլ: Դատաւորաց զրքին բոլոր ազգային Հերոսները, Դաւիթ եւ Սողոմօն, մարգարէներու ամբողջ ցանկը ի մասնաւորի Նսայի, Երեմիա եւ Դանիէլ: Նոր Կտակարանը նոյնպէս լեցուն է անոնց

մով. անոնց ամենէն մեծ Հերոսի Յիսուսի անունով պէտք է սկսիլ ցանկը: Պօղոս իր տիրոջը Հետքերուն մէջ կը քայլէ երբ կը գրէ, «Ստոյգ կ'ըսեմ Քրիստոսով, չեմ ստեր, (իմ սիրտս ալ ինծի կը վկայէ Հոգւով սրբով)». որ մեծ տրամութիւն է ինծի ու իմ սրտիս անպակաս ցաւ: Քանզի ես ինքս կը խնդրէի նոյնութեամբ ըլլալ, Քրիստոսէ, իմ մարմնի կողմանէ եղբայրներուս ու ազգականներուս Համար»: (Հռովմ 9 1-3): ԱնՀատի մը սրտին մէջ ազգասիրական կրակի բոցերը ատկէ աւելի սաստիկ այրիլ կարելի է: Պետրոս, Յովհաննէս եւ Յակոբոս նաեւ բոլոր առաքեալները նոյն տենդով բորբոքած մարդիկ էին: Անոնք ամեն բան ուրացած եւ առաջ իրենց ազգին եւ ապա բոլոր աշխարհի բարձրագոյն բարիքին Համար անձերնին զոհեցին:

Անտարկոյս երբեմն վերոցիշեալ կամ ուրիշ Աստուածավախ եւ Աստուածասէր Ազգասէրներու ազգասիրութիւնը ժամանակից իշխաններու, տիրապետներու, քաղաքագէտներու եւ յաճախ կրօնական վարդապետներու ատելի կ'երեւար: Բայց կրկին եւ կրկին ապագայ պատմութիւնը ապացոյց տուաւ թէ այն նեղմիտ եւ կրօնամալ նկատուած Աստուածավախ Ազգասէրներու տղին Հետեւելու միակ ճամբան էր: Իրեւ նոյն վերոյիշեալին յիշէ Յեսու եւ Քաղերը, երկուքն ալ Աստուածասէր Հերոսներ էին: Մինչ Մովսէս Իսրայէլի ժողովուրդը կ'առաջնորդէր դէպի Քանան անապատէն 12 մարդիկ զրկեց որպէս զի երթան այն երկիրը լրտեսեն: Իրենց վերադարձին ամէնքը միաբերան չեշտեցին թէ ան զարմանալի երկիր մ'էր, մեղր ու կաթի երկիրը, առատ եւ անուշ պտուղներու պարտէզ մ'էր ան: Եւ անոնցմէ երկուքը Յեսու եւ Քաղեր իրենց Աստուծոյն վստահելով կ'ըսէին. «Երթանք, եւ ամբողջ յերկիրը պիտի չաղթենք, արդէն ան մեր վախովը լեցուած է:» Եւ անոնց վրստահութեան Հիմը իրենց Հաւատքն էր, ասոնք կը պատկանէին նեղմիտ, կրօնամալ սեպուած դասակարգին: Իսկ մնացեալ տասը հաւատքէն աւելի մարդկային հաճիւ

դիտող քաղաքացիներ էին: Այս վերջինները մանրամասնութեամբ պատմեցին երկրին ամուր դիրքը, զարմանալի բերդաքաղաքները, ժողովուրդին հսկայակազմ ըլլալը, եւն. եւն: Եւ եղրակացուցին թէ չիմարութիւն պիտի ըլլար յարձակիլ այդպիսի ժողովուրդի մը վրայ. թէ այս ամբողջ Իսրայէլի մահը պիտի ըլլար: Անշուշտ ժողովուրդը հետեւեցաւ վերջիններու խրատին. Հետեւանք՝...: Աստուած ըսաւ Մովսէսի միջոցաւ թէ ամբողջ ժողովուրդին, 20 տարիքէն վեր, Յետեւ եւ Քաղէճէն զատ եւ ոչ մէկը Քանան պիտի մտնէ: Եւ այսպէս ալ եղաւ:

Խեղճ Երեմիան քանի քանի անգամներ բանտարկեցին պատժեցին, գութը ձգեցին որովհետեւ անանկ գաղափարներ կարտայայտէր որ իր ժամանակակից քաղաքագէտներու գործին չէր գար: Բայց Երեմիայի իսկ կեանքին մէջ յայտնուեցաւ անոր իմաստութիւնը:

Ներկայիս նոյն ճշմարտութիւնը անուրանալի եղաւ Գերմանիոյ մէջ: Երբ անոր խոշոր գլուխ, իմաստուն. կրթուած (Պիլզմարզի, Նիչիի դպրոցներուն մէջ) սպաները, նաեւ փրիւստփաները, անհաւատ քարոզիչներ եւ քննադատներ Սուրբ Գրոց, անաստուած Աստուածաբանները եւ Հրճուածք ու փառասէր դիւանագէտները ու քաղաքացիները կ'առաջնորդէին անոր մէջ քանի անժանօթ, նեղ կրօնամոլներ ալ կը գտնուէին որոնք Երեմիաներ էին: Այն խենդերուն, յիմարներուն ո՞վ մտիկ կ'ընէ. ձգէ գործիդ նայէ. ջարդէ. տիրէ Քրիստոս գութ եւ սէրը կը ծաղրէ Հաւա՞, և այսօր ո՛ւր են մեր խոշոր գլուխ ակնոցաւոր պարոնները... դուք գիտէք:

Եւ ի՞նչ է դասը այսօր Հայուն Համար ով ծաղրիչներու նստարանները բաղձող եւ ամէն կրօնք եւ Աստուած բառերը գործածող անհատներ իբրեւ Անգլիկոս, կրօնամուլ, գափիթալիսք, ազգակործան դաւաճաններ ածականներով որակող խոշոր գլուխ պարոններ մի գուցէ անոնց միջոցաւ ալ Աստուած ձեզի խօսած ըլլայ:

2. Սուրբ Գիրքը ոչ միայն Աստուածասէր Ազգասէրներու օրինակովը կը խօսի. նաեւ ուղղակի կը Հրամայէ թէ ամէն Հաւատացեալ իրենցներուն Հանդէպ մասնաւոր պարտականութիւն մը կը կրէ: Լսէ «Բայց եթէ մէկը իրեններունը մանաւանդ իր ընտանիքին Հոգ չտաներ. անիկա Հաւատքը ուրացած է, ու անհաւատէ մըն ալ գէշ է»: (Ա. Տիմ. 5.8.) Եւ ի՞նչ է ազգ. եթէ տէր ընդարձակ ընտանիք մը:

Իբրեւ Քրիստոնեայ դուն պարտականութիւն մը ունիս քու ազգիդ Հանդէպ եւ այս սիրոյ պարտք է: Եւ երբ սէր բառը կ'արտասանեմ անոր ամենէն ընդարձակ առումովը ըսել կուզեմ: Սէր որ իր անձը, ոյժը, դրամը զոհելու պատրաստ է ի պահանջել Հարկին: Եւ այսօր մեր ազգը մերինը կը պահանջէ: Եւ ես վստահ եմ որ ձայնս լսող ամէն Հաւատացեալ իր կրցածը ընելու պատրաստ է: Եւ այս առիթով կը փափաքեմ շեշտել սա իրողութիւնը անգամ մըն ալ թէ Քրիստոսի մէջ եւ միջոցաւ այնքան թանկագին գանձ մը կը շահեա քու ընտանիքիդ եւ ազգիդ Համար, որ պէտք չէ որեւիցէ զօրութիւն քեզ Համոզէ որպէսզի այդ գանձը — Քրիստոսը — ազգիդ զլանաս: Առանց Քրիստոսի անհատը մեռած է. ազգը անկենդան է. եւ Հակառակ ամէն դժուարութեան պէտք է Հաւատքը պահել: Մեր ոյժերը ամփոփել, կազմակերպել եւ չարձակիլ: Այսօր մեր Հաւատքի թշնամին արտաքին ըլլալէ շատ աւելի ներքին է: Հաշուն Հաւատքը արտաքինը չաղթեց. ներքինն ալ պիտի յաղթէ: Եւ թող մի տար որ թշնամիին ծաղրանքը քեզ կողոսկտէ Հաւատքէդ: Եւ այսօր սա Համոզումով քեզ ներշնչել, միկրտել քաջալերել կը փափաքեմ. Հերոսի մը դեր կը կատարես ազգային կիանքիդ մէջ երբ Հակառակ բոլոր թշնամիներու. Աստուծոյ սիրոյն Համար, ազգի սիրոյն Համար Քրիստոսի Հաւատքը կը շահես: Եւ դուն ճշմարիտ ազգասէր մըն ես:

Այս առիթով կարդալ «Hurrah and Hallelujah» գիրքը եւ տես թէ ըսածներս ճշմարտութիւն են:

ԱՂՈԹՔՈՎ ԳՈՐԾԵՐ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ

Խորունկ ցաւ մը շարունակ եւ զօրաւոր կերպով կը ճնշէ Աստուծոյ սրտին վըրայ: Այդ ցաւը մեր ընտանեկան յարկին վիճակը կը ներկայացնէ:

Աշխարհ Աստուծոյ անառակ որդին է եւ Աստուծոյ սիրտը կոտրած է իր անառակին վիճակին համար: Հայրական օճախը լեցուն չէ եւ ընտանեկան շրջանակը կոտրած է: Երեկոյին երբ անդամները ընտանեկան սեղանը կը շրջապատեն անոր աթոռներէն մէկը միշտ պարաս կը մնայ:

Սաղաւն Հայրը միջոց մը գտաւ անառակ աշխարհը իր յօժարութիւնով ներկայ ինկած վիճակէն կրկին իր նախկին վիճակին բերելու համար: Աստուծոյ այդ միջոցը թէեւ նոյն իսկ իր որդիին պէտքը պահանջեց, Ան իր որդիին ալ չի խնայեց: Սաղաւն որդին հանդէպ մարդոց ունեցած վերաբերումը Հօրը սիրտը դարձեալ աւրելնով վերաւորեց: Ընտրուած միջոցը որդիին կեանքը արժեց, բայց որդին Յիսուս իր կեանքը չի խնայեց: Սա կէտը որոշ հասկնալու ենք որ Որդիին մահը ինքնին բաւական չէ եթէ ան պատեհութիւն մը չէ եղած մարդոց՝ իրենց կեանքին մեծ որոշումը ընելու համար: Որդին մեռաւ, բայց մենք պիտի ապրինք: Ան մեռաւ աշխարհի մը համար որպէսզի մենք ապրինք աշխարհի մը համար:

Անառակ աշխարհը իր տունը վերադարձնելու համար Յիսուս մեզմէ իւրաքանչիւրին հետեւեալ հինգ շաները տուած է:— Կեանքը, կամ ինչ որ ենք. Երթումքնիս, կամ ինչ տրված ենք. մեր ծառայութիւնը, կամ ինչ որ կ'ընենք. դրամնիս, կամ ինչ որ անձնասիրաբար մեզի համար չենք դիզած. եւ մեր աղօթքը, կամ ինչ որ յաղթող Յիսուսի անունովը կը խնդրենք:

Մեզմէ ամէն մէկը, իր այս 5 մատ-

ներէն բաղկացած Հոգեկան ձեռքին միջոցաւ կրնայ հասնիլ եւ փարիլ մերձաւոր մարդուն, Հեռաւոր մարդուն, եւ ասոնց միջեւ եղող մարդուն: Կրնայ զանոնք ետ տուն բերել Աստուծոյ, եւ պողպատէն շատ աւելի զօրաւոր եւ անբախտելի կապով զանոնք Անոր կապել:

Վերը յիշուած հինգ բաներուն մեծագոյնը աղօթքն է: Աղօթքը իր արմատները կեանքին խորը ձգած ըլլալով իր անուամբ անկէ կը ստանայ: Խօսուած ամէն խօսք եւ կատարուած ամէն փոքր ծառայութիւն իրենց նշանակութիւնը եւ արժէքը կեանքէն կը ստանան: Կեանքեր փոխակերպելու նպատակով տրուած ոսկիին արժէքը կախում ունի այդ տրուած դրամին հետ անհատին որքան կապուած ըլլալէն: Աղօթքը, որ կեանք է, եւ Յիսուսի զօրութիւնը, որ աղօթքին վրայ կ'աւելցնենք, երկուքն ալ մեր կատարելիք գործին վրայ դարձնելու ենք:

Այս առթիւ անհրաժեշտ է աչքի առջեւ ունենալ սա կէտը որ աղօթքը գործեր կատարուելուն միջոցը կ'ըլլայ: Երբ մէկը ուղիղ կերպով ընէ իր աղօթքը, կարենայ զայն ապրիլ եւ աղօթելը իրեն սովորութիւն ընէ, այն ատեն բաներ պիտի պատահին: Աղօթքը այնպիսի զօրութիւն մըն է որով Հոգեկան Հոսանք մը մեր ճիգ թափած մէկ առարկային վրայ կը դարձնենք: Այդ Հոսանքին դառնալովն է որ գործեր կը կատարուին:

Ելեքտրականութեան կեդրոնական շէնքին մէջ մի քանի կոճակներ շարժելով ամբողջ Հաստատութիւն մը լոյսով կ'ողողուի, Հարիւրաւոր անիւներ կը սկսին զառնալ, շատ մը ելեքտրական կառքեր կը սկսին շարժել: Ու ասոնք ամէնը ելեքտրական ուժի կեդրոնէն Հարիւրաւոր մղոններ հեռու կը գտնուին: Ելեքտրականութիւնը չես տեսներ, սակայն գիտես թէ ինչ կը պատահի: Հոգեկան Հոսանքն ալ նոյն կերպով կրնաս դարձնել եւ նոյնքան վըստահ կրնաս ըլլալ անոր միջոցաւ գործեր կատարուելուն: Անոր միջոցաւ՝ շատ մը մարդոց կեանքերը կապող ստորին մոլու-

Թիւններու ունակութեան շղթան կը թու-
նայ եւ կը կոտորի: Մեծ պէտքի մը առ-
թիւ անհրաժեշտ եղած դրամը կը հայ-
թայթուի: Հիւանդութենէ դեռ նոր ապա-
քինող անձը առողջութիւն եւ տոյժ կը ստա-
նայ: Վերջապէս անել ճամբան բաց դու-
ռով մը կը վերջանայ:

Գարձեալ, աղօթքի միջոցաւ վախազ-
դեցիկ վայրը իր սոսկում եւ արհաւիրքը
կը կորսնցնէ միեւնոյն ժամանակ անոր
պարիսպները կ'իջնան: Պարագաները կը-
փոխուին: Սրտեր կը կախուղնան: Կամա-
կոր կամքեր կը խոնարհին: Այդ հոգեկան
հոսանքին ազդեցութեան ոչինչ կրնայ դի-
մադրել եթէ միայն անոր գործելակերպին
համաձայն պատշաժ ուղղութիւն տրուի
անոր:

Կեանքի մէջ որեւէ գործի կատար-
ուելը չենք վրնար բացատրել: Բայց կա-
րեւոր խնդիրը այդ է: Ուրիշ շատ մը հա-
սարակ բաներ ալ չենք կրնար հասկնալ,
սակայն դիտենք որ անոնք կը պատահին
եւ մեր առօրեայ զբաղումները անոնց հա-
մեմատ կը ծրագրենք: Օրինակի համար,
այս առաւօտ նախաճաշիս մէջ եղող ցորե-
նին մէկ մասը ոսկորի պիտի փոխուի, ու-
րիշ մաս մը մազի, մէկ ուրիշ մասը մատ-
ներուս եղունքին, դեռ ուրիշ մաս մը
կարծր մկանի, ու վերջապէս ուրիշ մաս
մը կակուղ միսի: «Ինչո՞ւ» կարելի է այս»
կը հարցնենք: Ի՞նչպէս կըլլայ որ նիւթի
միեւնոյն կտորը իրարմէ բոլորովին տար-
բեր արդիւնքներ կ'արտադրէ:

Վերջերս Պալթիմօր քաղաքին մէջ
գումարուած ժողովի մը առթիւ այս նոյն
հարցումը ըրի իմ բժիշկ բարեկամիս: Այդ
մեծահամբաւ անձնաւորութիւնը որ մարդ-
կային մարմինը իմ պարզ Անգլիերէն կար-
դալուս նման կրնար կարգալ, ինծի պա-
տասխանեց որ, այդ գործողութիւնը իր
վերջնական քննութեանը մէջ իսկ բացատ-
րել անկարելի է: Սակայն այդ կէտը իմ
գործնական կեանքիս չ'ազդեր: Ես տա-
կաւին կը շարունակեմ իմ ճաշերս ընել եւ
առաւօտեայ գործերուս կատարումին հա-

մար անոնց տուած զօրութեանը կը վըս-
տահիմ:

Wall St-ի մէջ գործող յանձնակատար
մը Լօնտօն քնդծովեայ հեռագիր մը կը
զրկէ: Սակայն իր բոլոր ըրածը միայն
այս է. կտոր մը դեղին թուղթի վրայ
տասը կամ տասներկու բառեր գրելով
զայն իր գրասենեակի մանչուն հետ հե-
ռագրատուն կը զրկէ: Հոն գործող պաշ-
տօնեան իր առջեւի մեքենային վրայ հինգ
վայրկեանի չափ գլխիներ կուտայ եւ դե-
ղին թուղթը պատին վրայ կը կախէ: Գոր-
ծատեղիէն անգամ դուրս չ'ելլեր: Միեւ-
նոյն ատեն Լօնտօնի մէջ մեծ քանակու-
թեամբ արժեթուղթեր կը փոխանակուին
եւ հաւանաբար հարիւր հազարաւոր տո-
լարներ ձեռքէ ձեռք կ'անցնին:

Ի՞նչպէս կրնաս բացատրել ասիկայ:
կրնաս՞ բացատրել: Իմաստուն պատաս-
խան է, «ոչ, չես կրնար»: Ելեկտրական
«հեղուկ»ն ալ—հեղուկ թէ այլ ինչ, չենք
դիտեր: Աղբանտեանի յատակը ձգուած
թել է, պարանին վրայէ՞ն կ'անցնի թէ
մէջէն: Ասոնց պէս խնդիրներու մասին
բանիմաց անձեր անկեղծօրէն իրենց տրդի-
տութիւնը կը յայտնեն: Այսուհանդերձ
ելեքտրական հոսանքի որոշ օրէնքներու
մասին տեղեակ ենք: Երբ այս օրէնքներու
համաձայն գործենք, այն ատեն որոշ ար-
դիւնքներ կրնանք ակնկալել: Սա չափը
որոշ է որ սոսկ տրուած հեռագրին մի-
ջոցաւ միլիաոններով տոլարներ ձեռքէ
ձեռք կ'անցնին: Աշխարհի հսկայ առեւ-
տրական մեքենան մեծ մասամբ այդ կեր-
պով կը դառնայ:

Երբ Աղբանտեանի քաղաքը նաւի մը
շողեմդիշ մեքենաներէն մին կտորի կամ
վնասուի, անմիջապէս «մեր հոգիները
փրկէցէ՞ք» ի նշանը կը զրկէ: Ու ասոր վրայ
հարիւրաւոր մղոններ հեռու, աչքով տես-
նելը անկարելի եղող նաւ մը իր սովորա-
կան ճամբան փոխելով օգնութեան կը
փութայ: Եղածը միայն այդ էր, նաւին
էն բարձր տեղը, մասնաւոր խուցի մը մէջ՝
անթել հեռագրի պաշտօնեան գլխիներ ար-
ձակող մեքենան գործածեց, եւ որմէ

դուրս եկող միակ բանը կապոյտ լոյսի խառնափնթոտ ցալտոմներ էին: Նաւերու միջեւ թեւերու յարաբերութիւն — դէթ աչքի տեսանելի յարաբերութիւն չկար:

Միեւնոյն ատեն ազատարար նաւին անթեւ Հեռագրի պաշտօնեան ալ իր գլիք ներու մեքենային միջոցաւ վտանգեալ նաւին գլիքներէն լուռ կ'առնէ: Եղածը չես կրնար բացատրել, սակայն եթէ դուն ալ այդ վտանգեալ նաւուն մէջ ըլլայիր կեանքըդ ազատող նաւին գալը Հեռուէն տեսած ժամուրդ անտարակոյս պիտի Համոզուէիր որ երկու նաւերուն միջեւ յարաբերութիւն մը կար:

Սակայն կէտ մը կայ որ ի մտի պէտք է ունենաս: Նիւ Եօթէ Հեռագիր ղրկող անձը Լօնտօնի մէջ նոյն Հեռագիրը ընդունող անձին Հետ արդէն Հասկացողութիւն մը ունի: Բայց ծովուն մէջ եղող երկու նաւերը անթեւ Հեռագրի լեզուէն կը Հասկնան: Նմանապէս ստամոքսն ալ մարդկային մարմինին միւս մասերուն Հետ գործելու Համաձայնութիւն ունի: Առանց այս Հասկացողութիւններուն՝ վերը յիշուած բաները չի պիտի պատահէին: Ամէն բան այդ Հասկացողութիւններէն կամ Համաձայնութիւններէն կախում ունի, Համաձայնութիւն մը որ փոխադարձ է եւ արդիւնաբեր:

Արդ մեզի Համար նկատելի եւ գործնական իրողութիւնը այն է որ, աղօթքը գործեր կատարելու միջոց կ'ըլլայ: Աղօթքն ալ վերի յիշուած ուժերուն նման գործնական ուժ մըն է: Անոր ալ առաջ բերած արդիւնքները նոյնքան գործնական շոշափելի, եւ անկասկած են: Յորենը կերած ատենդ, ընդծովեայ Հեռագիրը ղրկուած ատեն, «մեր Հոգիները փրկեցէք» տաղնապի նշանը տրուած ատեն, եւ կամ աղօթքի մը ըսուած պաՀուն, ամենուն ալ արդիւնաւոր ըլլալուն պայմանը միեւնոյն է: Նախ գործ տեսնող Հասկացողութիւն մը կամ դաշինք մը գոյութիւն ունենալու է: Եւ ասիկայ Հաստատուն եւ անփոփոխելի օրէնք մը ըլլալու է գործունէութեան Համար: Երկրորդ, գործ տես-

նելու Համար կանխաւ եղած Համաձայնութեան Համեմատ, Հաղորդակցութեան Համար ժամանակ տրուելու է: Երրորդ, որոշ արդիւնքներ պիտի տեսնուին: Նախաձեռն յանձնակատարին գործունէութիւնը, տաղնապի նշանը եւ կամ աղօթքը անտարակոյս որոշ արդիւնքներ փուտան: Սակայն—սակայն, սա կէտը չատ որոշ գիտնալու եւ — անհրաժեշտ է որ գործ տեսնող Համաձայնութիւն մը գոյութիւն ունենայ, եւ այդ Համաձայնութեան Հանդէպ զօրաւոր Հաւատք ունենալու ենք որ պէսզի ամբողջ գործը անօգուտ չըգաւանայ:

Աղօթքով գործ տեսնող համաձայնութիւնը իր մէջ չորս պայմաններ կը պարունակէ, եւ անոնք ալ կերակուրի մարսողութեան, կամ ելեւորական Հոսանքին գործածութեան պայմաններուն նման անհրաժեշտ եւ անփոփոխելի են:—

Առաջին պայման. Աղօթքը Յիսուսի անունով ըլլալու է: Յիսուսի անունը Անոր անձին, իր կատարած գործին, իր նկարագրին, Գողգոթայի վրայ Անոր Թափած արիւնին եւ յարութիւնով մահուան վրայ ունեցած իր զօրութեան ներկայացուցիչն է:

Երկրորդ պայման. Աղօթող անձը սրտով, բնութիւնով եւ կեանքով Յիսուսի Հետ շփում ունենալու է:

Երրորդ պայման. կրթութիւն եւ շինութիւն տուող Հին Գրքին Հետ ժամանակ անցընելու ունակութիւն մշակելու ենք, որովՀետեւ այդ գիրքը աղօթքի միւսակ դասագիրքն է: Ան մեր տեսութիւնը կ'ընդլայնէ, մեր գատողութիւնը կը կրթէ, Հաւատքնիս կը զօրացնէ եւ միտքը, սիրտը ու լեզուն կ'ազնուացնէ:

Չորրորդ պայման. Ամեն օր առանձինն ճշմարիտ կերպով աղօթելու է: Աղօթքի միջոցաւ աղօթելու մէջ կարողութիւն կատանանք: Անով է որ անկեղծութեան, ակնկալութեան, յարաբերութեան եւ զօրաւոր վստահութեան փորձառութիւն կ'ունենանք:

Եթէ միայն վերը յիշուած գործ տեսնող Համաձայնութիւնը գոյութիւն ունե-

նայ, եւ մենք Հաւատարմութեամբ եւ մտացիօրէն անոր յարինք, այն ատեն աղօթքով կատարուած բաներուն չափն ու սահմանը պիտի չըլլայ: Ան քարէ պատերէ ներս թափանցելով կը պուած տուներու մէջէն կ'անցնի, եւ ներքին սենեակը կը մտնէ, ու Հոն մարդուն սրտին կը դպչի. անոր կեանքի որոշումը կը փոխէ, եւ իր կամքը կը խոնարհեցնէ կամ կը թուլցնէ:

Աղօթքը նկատի չառնէր Հեռաւորութիւնը: Անոր Համար Չինաստան գործնական արդիւնքներու տեսակէտէն քու բընակարանիդ դիմացի տունին չափ քեզի մերձաւոր կ'ըլլայ: Աղօթքի միջոցաւ Հընդ կաստան քու Հիտ Հոգեւոր սերտ առընչութեան մէջ կը դրուի: Աշխարհի ժողովուրդներու վրայ ազդեցութիւն ունենալու տեսակէտէն Հարաւային Ամերիկա եւ Ափրիկէ քեզի կից դարացիներ կ'ըլլան: Աղօթքը արդիւնքներու վրայ կը ծիծաղի: Պօղոսի աղօթքը Փիլիպպէի բանտին պատերը խորտակեց: Ու պետրոսի բարեկամներուն աղօթքը Երուսաղէմի մէջ Հոռովի բանտին դռուը բացաւ:

Աղօթքին կատարելիք բաներուն չափ ու սահմանը կախում ունի գործ տեսնող Համաձայնութեան Հանդէպ մարդուն ցուցուցած դժկամակութենէն, վախկոտութենէն եւ զանցառութենէն: Մոռնալու չենք նաեւ որ, աղօթքը Սբ. Հոգիին շնորհազարդ առաջնորդութեամբ կատարուելու է:

Բայց մի մոռնար գործ տեսնող համաձայնութիւնը: Ամէն բան անկէ կախալ է. ցորենը, յանձնակատարին Հեռագիրները, «մեր Հոգիները փրկեցէք»ի կոչը եւ — աղօթքը:

Տր. Ս. ԿՕՐՏԸՆ

Թարգմ. Ե. Հ. Պասմաճեան



Ս. ԳՐՈՑ ԱՄԵՆԷՆ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐԷՆ ՄԻՆ

Եսա. 9.6: «Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ, ու անոր անունը պիտի կոչուի սքանչելի, խորհրդակից, Հզօր աստուած, յաւիտենականութեան Հայր, խաղաղութեան իշխան»:

Ամբողջ Սբ. Գրքին մէջ արձանագրուած ամենէն զարմանալի Համարներէն մին է ասիկայ: Արդեօք մարդարէն ի՞նչ կը խորհէր, երբ այս տողերը կը գրէր: Ի՞նչպէս կրնար մարդ մը ասանկ խօսքեր արտասանել, առանց իր մտքի Հաւաստարկը շուրջութիւնը կորսնցնելու: Ի՞նչպէս կըրնայ մարդակերպ մանուկ մը «Հզօր Ած.» ջլլալ: Ասիկայ ի՞նչ Հակասութիւն է խորհուրդի, ի՞նչ պակասութիւն է դատողութեան: Մարդկօրէն խօսելով, Եսայի մարգարէն լիմարութիւն եւ անիմաստութիւն կ'արտասանէր այս բառերով: Սակայն, այս խօսքերուն մէջ պարուրուած պատմական ամենաաքանչելի ճշմարտութիւնը, Աստուածային ներշնչումի անմիջական ու Հարազատ արդիւնք էր այս մարգարէութիւնը: Անհնարին է այս խօսքերը բացատրել, առանց ընդունելու անոնց երկնատուր բնոյթը եւ Աստուածային ծագումը: Ասանկ արտայայտութիւն մը մարդկային մտքի եւ երեւակայութեան արտադրոյթը չի կրնար ըլլալ:

Մարգարէն այս խօսքերով պատմական Հրաշագործութեան մը կ'ակնարկէ: Անիկա կարծես թէ կէս գիշերուան մը թութեան մէջ երեւակայութեամբ կը տեսնէ այդ պայծառ այգը՝ որ պիտի ծագի: Անիկա Հոգեւորապէս կ'ըմբռնէ թէ, թէ որ մարդկութիւնը պիտի ազատի մըշտատեւ իրարանցումէ, եւ պիտի փրկուի իր մոլորութենէն, պէտք է որ Աստուած մըտնէ մարդոց մէջ: Առանց Աստուծոյ մարդկային ազատագրութեան, յառաջդիմու-

թիւն, եւ կատարելագործում անկարելի է: Մարդկային զարգացման ու վերակազմակերպման համար առաջադրուած ամէն ծրագիր որ զԱստուած դուրս կը ձգէ, բոլորովին անբաւական եւ անօգուտ է:

Եսայի մարգարէն որ Քրիստոսէ 750 տարիներ առաջ ապրեցաւ, Աստուածային յայտնութեան շնորհիւ, ահանատեսի մը պաշտօնատեսութեամբ մարգարէացաւ Աստուածամարդին գալուստը: Եւ անոր ամէն մէկ յայտնութիւնը ինչ զարմանալի կերպով կը համապատասխանէ Նազովրեցիի պատկերին: Բոլոր մարգարէները մինչեւ Քրիստոսի օրը մարգարէացան, եւ անոնց մարգարէութիւնները իրականացան Քրիստոսի անձին մէջ, եւ ինչ որ դեր կատարուած չեն, պիտի կատարուին անոր երկրորդ գալուստեանը մէջ:

Յիսուսի ծնունդը պատմութեան կարեւորագոյն դէպքն է: Այս յայտարարութեան բացարձակ ճշմարտութեան պիտի համոզուինք, թէ որ ուսումնասիրէք անոր համայնապարփակ ազդեցութիւնը բոլոր մարդկութեան վրայ, եւ անոր գալուստեան տրուած գերազանց կարեւորութիւնը Աստուծոյ չաւիտեանական ծրագրին մէջ: Երկնքի տակ չկայ ազդեցութիւն մը եւ զօրութիւն մը որ այնքան իրական եւ ներգործիչ եղած ըլլայ, որքան Յիսուսի կեանքը եւ խօսքերը: Անոր անձնաւորութիւնը պատմութիւնը չինոզ եւ յեղաշրջող մեծագոյն ազդակը եղած է: Կրնա՞ք չիշել գաղափարի կամ գործքի գաւառ մը որ խորապէս ազդուած ըլլայ Յիսուսի անձին: Ամէն խորհող, գրող, վարդապետող մարդ ստիպուած է կարեւորութիւն եւ տեղ ընծայել Յիսուսի կեանքին իրականութեան: Աստուծոյ ծրագրին մէջ ալ Յիսուս կեդրոնական տեղը կը գրաւէ: Ամէն բան անոր կը մատնանչէ: Յիսուսի մէջ միացած են Աստուծոյ միտքը, կամքը, նպատակները: Թէ Աստուած ինչ մեծ կարեւորութիւն տուած է Յիսուսի աշխարհ գալուստեան, մասամբ կը յայտնուի մեզի աս պարագայով թէ Աստուած յարմար դատած է դաբեր առաջնական աշխարհին իմաց տալ այս

մեծ դէպքը, եւ հռչակել այս մեծ աւետիսը: Մարգարէներու կանխասացութիւնները Յիսուսի մասին ապացոյցներ են թէ անոր գալուստը կենսական կարեւորութեամբ եւ անչափելի արժէքով աւելցուն դէպք մըն է:

Հիմա մեր խորհրդածութեան առարկայ ընենք այդ մարգարէութիւնը որ մեր բնաբանը կը կազմէ: «Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ, ու անոր անունը պիտի կոչուի սքանչելի, խորհրդակից, Հզօր Աստուած, յաւիտեանակութեան հայր, խաղաղութեան իշխան»:

Հին Կտակարանին մէջ ամէն յատուկ անուն նշանակութիւն մը ունի, եւ անհատին բնութիւնը եւ նկարագիրը կը բնորոշէ: Այդ մանուկը, զոր մարգարէն կանխատեսութեամբ ծնած կը տեսնէ, այսքան հրաշալի էակ մը պիտի ըլլայ որ մէկ անուն անբաւական պիտի չըլլայ զայն նկարագրելու. ուստի անոր մէկէն աւելի անուններ պիտի տրուին, որոնցմէ ամէն մէկը անոր նկարագրին տարբեր հանգամանքները եւ ստորագրութիւնները պիտի արտայայտեն, երբ ուշադիր կը նայենք մարգարէին տուած անուանացանկին, իսկոյն կը տեսնենք թէ այդ մանուկը որ այս անուններուն տէրն է, հասարակ մահկանացու եւ մեղաց մէջ ծնեալ մարդ արարած մը չի կրնար ըլլալ: Անիկա պէտք է ըլլայ մարդ մը, եւ միեւնոյն պատեն Աստուած մը:

Համաշխարհային պատմութիւնը տալաւին արձանագրած չէ ասանկ էակի մը անունը, ի բաց առեալ Բեթլէհէմի մըսուրին մէջ ծնած մանուկը, որու անձին մէջ այս բոլոր անունները գտած են իրենց կատարեալ մարմնացումը: Մէկիկ մէկիկ առնենք այս անունները եւ տեսնենք թէ անոնք ինչ Հիանալի կերպով իրականացուցած են Յիսուսի անձին մէջ:

Առաջին անունը «Սքանչելի» է: Ըսքանչելի կը կանչենք այդ առարկան որ մեզի անսովոր Հիացում կը պատճառէ: Ունէ բան սքանչելի ըլլալու համար, պէտք

է ըլլայ գեղեցիկ ու հաղուազիւտ: Տգեղ բան մը սքանչելի չենք կրնար կոչել, որքան ալ հաղուազիւտ ըլլայ ան: Նմանապէս հաղուազիւտ բան մը չի կրնար ըսքանչելի յորջորջուիլ, մինչեւ որ գեղեցկութեան լատկանիչը չընկերանայ անոր: Յիսուսի անձին մէջ, «Սքանչելի»ի երկու ստորագրելիքները ի՞նչ փառաւոր եւ ներդաշնակ կերպով մարմնացած են: Անոր կեանքը իբր լուսաշող արեգակ կը ճառագայթէ համաշխարհային երկնակամարին վրայ: Անոր պայծառ լուսաւորութեան առջեւ միւս բոլոր լուսատու մարմինները կը նսեմանան ու կ'աներեւութանան: Անոր անհասանելի նկարագիրը պատմութեան մեծագոյն հրաշալիքն է: Նազովրեցին ցոյցէ ու ժողովրդականութենէ խորշեցաւ: Անիկայ չի պոռաց եւ չ'աղաղակեց: Անիկա Պաղեստինի նեղ սահմաններուն մէջ երեք կարճ տարիներ չըջաղայ իբր հեղահամբոյր եւ հասարակ մարդ մը: Բայց անոր կեանքը անպիտի անչնչելի տպաւորութիւն մը ձգեց զինք տեսնողներուն վրայ, եւ ականատեսներու շնորհիւ ապագայ սերունդներուն վրայ, որ անիկա պիտի կենայ մինչեւ աշխարհին վերջը, իբր պատմութեան փառաւորագոյն իրականութիւնը:

Որ կողմէն որ դիտելու ըլլաս, անոր մէջ պիտի տեսնես հիասքանչ երեւոյթներ: Թէ որ նայիս անոր նկարագրին, կ'զմայլիս անոր անրիժ Սրբութեան, անխարդախ արդարութեան, անվեհեր կորովամբողութեան: Թէ որ աչիդ դարձնելու ըլլաս անոր ներքին կեանքին, կը սքանչանաս անոր անբաղդատելի անձնաւերացութեան, անոր անպատիր անկեղծութեան, անոր արժանահաւատ ճշմարտութեան: Անոր հոգին յոյս եւ լոյս կը ճառագայթէ. անոր սրտէն գուրգուրանք եւ կարեկցութիւն կը լորդէ: Աչակերտները իր դիւթիչ ներկայութենէն կը յափշտակուին: Բարեկամները անոր հոգեկան աղնուութեան կը հիանան: Թշնամիները անոր մէջ մեղք մը կամ թերութիւն մը չեն կրնար նըշմարել: Կատարելապէս անաղարտ եւ անմեղ

է նա: Սքանչելի է նա նկարագրով:

Յիսուս սքանչելի է լեզուով: Հոժ բազմութիւններ մինչեւ անապատ տեղեր կ'երթան անոր ունկնդրելու: Հասարակ ժողովուրդը անոր ժամերով մտիկ կ'ընեն մտամոլոփ լափշտակութեամբ: Ի՞նչ սքանչելի կը խօսի այս մարդը կ'ըսեն. վարդապետներու եւ փարիսեցիներու չի նըմանիր անոր խօսուածքը: Անուշութիւն եւ աղքատութիւն մը կայ անոր լեզուին վրայ: Անիկա հեղինակութիւն ունեցող մէկու մը պէս կը խօսի: Յիսուս պատմութեան առաջնակարգ ոսկեբերանն է:

Յիսուս սքանչելի է գործքով: Անիկա երկնաւոր իշխանութիւն եւ բացարձակ զօրութիւն ունի ամէն բանի վրայ: Անիկա կ'ըսէ «խաղաղէ», եւ ալեկոծ ծովը խաւոյն կը հանգարտի: Անիկա կ'ըսէ «բացուէ», եւ կոյրին աչքերը կը բացուին: Անիկա կը հրամայէ «եւր», եւ պիղծ հոգիները աղաղակելով դուրս կ'ելլեն: Անիկա կ'ըսէ «մաքրուէ», եւ բորոտները կը մաքրուին իրենց ախտերէն: Անիկա հիւանդներուն կը դպչի, եւ զանոնք կը բժշկէ, ախտաւորները անոր կ'առնեն կը հպին, եւ իրենց հիւանդութիւններէն կը բուժուին: Անիկա կը հրամայէ, «Արթընցիր» եւ մեռեալը կը վերակենդանանայ: Ժողովուրդը զարմանքով կը դիտէին անոր հրաշագործութիւնները, եւ ապշահար կ'ըսէին: «Ի՞նչ սքանչելի մարդ է, աշխարհիս սկզբէն իմեր տակաւին ասանկ մէկը եկած չէ»: Յիսուս Հանրութեան Հիացումին առարկան է: Բոլոր աչքեր անոր վրայ կեդրոնացած են. թէ մեծ եւ թէ պղտիկ, թէ աչր եւ թէ կին, թէ դիտուն եւ թէ տգէտ, թէ բարեկամ եւ թէ թշնամի, անխորաբար կը դիտէին զայն, նկատի կ'առնէին անոր նկարագրին վեհութիւնը, անոր հոգիին աղնուութիւնը, անոր օրինակին ներշնչումը, անոր կեանքին սրբազրիչ աղղեցութիւնը, եւ միահամուռ կ'աղաղակէին, ինչ՞ սքանչելի:

Մարգարէին կանխատեսած մանուկին տրուած երկրորդ անունը «Խորհրդակից» է: Այս անունն ալ իր կատարելագոյն ի-

բախանալուց հետո է Յիսուսի անձին մէջ: Նազովրեցին մարդկութեան ամենէն իմաստուն խորհրդատուն է: Ամէն մարդ կը սիրէ ուրիշներուն խորհուրդ տալ, թե՛ լազրութիւններ ընել, ճամբայ ցուցնել: Շատեր մարդոց կը ներկայանան իբր հանձառեղ բարոյագէտներ, քաջամուտ բարեկարգիչներ, հոգեւոր առաջնորդներ, եւ անոնք ժողովուրդին խորհուրդներ կուտան, եւ ժողովուրդն ալ առանց խորհելու եւ կշռելու անոնց կը հետեւին: Բայց փորձառութիւնը քանի քանի անգամներ աչք վարդապետողներու սխալմունքները երեւան կը բերէ, եւ մարդիկը յուսախար կը ձգէ: Իրենց ցուցադրած ճամբան յաճախ ելք չունենար: Իրենց տուած խորհուրդը օգտակար եւ բարեբար չըլլար: Եւ ասանկով երբ աշխատին ուրիշները փոսէն հանել, յիմարարար աւելի խորունկ փոսի մէջ կը ձգեն: Երկրիս վրայ որքան որ աղանդներ կան, (եւ անոնց թիւը հազարներով է), այնքան խորհրդակիցներ կան: Այս բոլորին մէջ միայն Յիսուսը կայ որ կը կենայ իբր ճշմարիտ եւ վստահելի խորհրդատու, որուն ամէն մէկ խորհուրդը արդար է, նպաստաւոր է, անսքիսալական է: Տակաւին մարդկային փորձառութիւնը չէ կրցած սխալմունք մը ապացուցանել անոր խորհուրդներուն մէջ:

Մեղաց մէջ թաղուած եւ ինքնիրմեն զգուած թշուառականին Յիսուս խորհուրդ տալով կ'ըսէ, «Ես կրնամ քեզ ազատիլ: Ինծի նայէ, ինծի հաւատալ, ինծի հետեւել ալ պիտի փրկուիս, եւ պիտի ըլլաս պատուական եւ յաղթական մարդ»: Ծամբան կորուսած թափառականին Յիսուս կ'ըսէ. «Աչքդ դէպ ի Գողգոթա դարձուր, նայէ այդտեղ տնկուած խաչին, քալէ այդ ուղղութեամբ, եւ պիտի գտնես չիտակ ճամբան, որ կեանք եւ արքայութեան կը տանի»: Իր անհատական կարողութիւններով խրոխտացող մարդուն Յիսուս կ'ըսէ, «Քու անձովդ մի հպարտանար, քու կարողութեանդ մի վստահիր, Աստուծոյ փառք տուր: Վասնզի ով որ իր անձը կը բարձրացնէ պիտի խոնարհի, եւ ով որ իր

անձը կը խոնարհեցնէ պիտի բարձրանայ»: Անձնասէր ու ինքնամփոփ մարդուն Յիսուս կ'ըսէ, «Անձնասիրութիւնը քեզի գոհունակութիւն չի պարգեւէր, ալ աւելի դժգոհ կը պահէ, եւ կեանքի բարձրագոյն վայելքներէն քեզ կը զրկէ: Իր ունեցածը բռնել ուզողը, ունեցածն ալ կը կորսնցնէ. իսկ իր ունեցածը բաժնողը, իր ունեցածը կը բազմապատկէ: Ան որ իր անձը կը գտնէ պիտի կորսնցնէ զանիկա, եւ ան որ իր անձը ինծի համար կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա»: Անձնասէր կեանքը անշահաւէտ է, ծառայութեան եւ զոհաբերութեան կեանքը պըտղաբեր եւ օգտաշատ է: Ամէն բան մոռնալով, եւ ամէն բարի սկզբունք զոհելով, հարստութիւն զիջելու ետեւէ եղողներուն Յիսուս կ'ըսէ: «Այսքան անմիտ մի ըլլաք, աշխարհին գոյքը չէք կրնար ձեզի հետ երկինք տանիլ: Թէ որ հարստութիւն զիջելու համար ձեր հոգին վրայ կուտաք, ձեր շահը ձեր կորցուտը չի գոյցեր: Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը, եթէ բոլոր աշխարհը վաստկի եւ իր անձը կորսնցնէ, վամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ: » Զէք կրնար ծառայել Աստուծոյ եւ Մամոնայի»: Դրամին արժէքը անոր օգտաբեր գործունէութեան մէջ է: Ուստի աշխատեցէք որ երկրաւոր եւ եղծելի գանձերը երկնաւոր ու անկորնջելի գանձերու փոխէք: «Անիրաւ մամոնայէն ձեզ բարեկամներ ըրէք, որպէս զի երբ անիկա պակսի, ձեզ չափաւանական բնակարաններու մէջ ընդունին: Ամէն բանի համար հոգ ընողներուն Յիսուս կ'ըսէ, «Հոգ ընելը քեզի ոեւէ օգուտ չի հասցներ, վնասէ զատ: Երբ կ'ունենաս հոգ ընելու պատճառ մը, զայն Տիրոջը յանձնէ, եւ անոր հայրական խնամքին եւ օգնութեան վստահէ»: «Հիմա ձեզմէ ով կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ կանգուն մը աւելցնել... ուստի վաղուան համար հոգ մի ընէք, վասնզի վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ, Հերիք է օրուան իր նեղութիւնը»: Տխրութեան ու սուգի սեւ ամպերուն տակ հառաչողներուն Յիսուս

կ'ըսէ, «Սիրտերնիդ չի խռովի: Աստուծոյ Հաւատացէք, ինծի ալ Հաւատացէք: Իմ հօրս տունը շատ բնակարաններ կան»: «Այս բաները ձեզի խօսեցայ, որպէս զի իմ ուրախութիւնս ձեր մէջ մնայ, եւ ձեր ուրախութիւնը լման ըլլայ»:

Յոսուսի անդուգական խորհրդատու մը ըլլալը ցոլցնելու համար օրինակներ աւելցնելու պէտք չկայ, անիկայ կեանքի ամէն մէկ ոլորտին ու պարագային Համեատ իմաստուն խորհուրդներ տուած է: Երանի այն մարդուն, որ Յիսուսի խորհուրդներուն կարեւորութիւնն ու միտք կուտայ, եւ անոնց համաձայն կը շարժի:

Մարգարէին միջոցաւ խոստացուած մանուկին տրուելիք երրորդ անունը, «Հօր աստուած» է: Ասկէ առաջ լիչուած երկու անուններու մասին գաղափարի Համաձայնութիւն կը տիրէ, բայց այս անունն Յիսուսի կիրարկումին մէջ, գաղափարները կը բաժնուին: Շատեր կը երկմըտին Քրիստոսի Աստուածութիւնը ընդունելու: Սակայն այս անունը Յիսուսի Աստուածութիւնը կը փաստէ: Այս մասին դրսեցիներուն խորհուրդները այնքան կարեւորութիւն չունին, որքան Յիսուսի ինքնագիտակցութիւնը եւ անձնական պաշտօնը (Claim): Յիսուս երկրիս վրայ տեսնուած միակ անձն է որ, Աստուածութեան գիտակցութեամբ կ'ապրի: Յիսուս այնպէս կը շարժի ու կը խօսի, իբր թէ ինք Աստուած մը եղած ըլլար: Եւ իր խօսքերուն ու գործքերուն վկայութիւնները Հաւաքարար կ'ապացուցանեն իր պաշտօններուն ճշմարտութիւնը:

Յիսուս կը յայտարարէ թէ իր եւ Աստուծոյ մէջ կատարեալ միութիւն կը տիրէ, նախ եւ առաջ, մտքի եւ խորհուրդի տեսակէտէն: Յիսուս Աստուծոյ միտքը կը ցոլացնէ: Անիկայ ինչ որ կը վարդապետէ, եւ ինչ խորհուրդներ տը կը յղանայ, ասոնցմով կը յայտնէ Աստուծոյ միտքը, կամքը, անվերաքննելի ճշմարտութիւնները: «Այն խօսքերը զորոնք ես ձեզի կը խօսիմ, ոչ թէ ինքնիրմէս կը խօսիմ, Հապա Հայրը որ իմ մէջս բնակած է»:

Երկրորդ տեղ Յիսուսի եւ Աստուծոյ մէջ կատարեալ միութիւն կը տիրէ նպատակի եւ գործեակերպի տեսակէտէն: Անիկայ կրկին ու կրկին կը յայտարարէ թէ ինք զրկուած է Աստուծոյ կամքը կատարելու: Ի՞նչպէս կարելի է թիւր ըմբռնել Փրկչին սա պարզ խօսքերը, «Վասնզի ես երկինքէն իջայ, ոչ թէ իմ կամքս ընելու, Հապա Անոր կամքը որ զիս զրկեց»: «Իմ կերակուրս այն է որ զիս զրկողին կամքը ընեմ, եւ անոր գործը կատարեմ»: «Ես ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել»: Այս եւ նման խօսքերը որոշուպէս կը յայտարարեն թէ Յիսուս երկնաւոր առաքելութեամբ եւ Աստուածատուր պաշտօնով աշխարհ եկած է:

Երրորդ տեղ, Յիսուսի եւ Աստուծոյ միջեւ անձնական եւ Հոգեկան կատարեալ միութիւն կը տիրէ: Յիսուսի Հոգին որակով եւ իսկութեամբ նոյն Հոգին է որ Աստուծոյ մէջ բնակած է: Անոնք Համախոհ եւ Համագոյ են: Անոնց մէջ էական ու անբաժանելի միաւորութիւն մը կայ: Անիկայ կ'ըսէ, «Հայրը իմ մէջս է, եւ ես անոր մէջը»: Յիսուս Աստուծոյ ինքնագիտակցութեամբ կ'ապրի:

Յիսուսի շատ մը խօսքերը, միայն անոր Աստուածային գոյութեամբ ըմբռնելի կ'ըլլան: Տարբեր Հասկացողութեամբ, անոնք անիմաստ, անարժէք եւ անկարելի խօսքեր են: Յիսուս Հրաւէր կը կարդայ, որ մարդիկ իրեն գան եւ իրեն Հաւատան, եւ իրեն եկողներուն Հիանալի խոստումներ կ'ընէ: Ինչ՞ իմաստով եւ իրաւունքով կրնայ մարդ արարած մը ասանկ պաշտօններ ընել: Օրինակի համար, մեր Տէրը կ'ըսէ, «Եկէք ինծի բոլոր յոգնած եւ բեռնաւորուածներ, եւ ես ձեզ պիտի Հանգըստացնեմ»: «Ան ամէնը որ կենդանի է ու ինծի կը Հաւատայ, յաւիտեան պիտի չը մեռնի»: «Առէք այս գաւաթը, եւ ամենիդ ալ խմեցէք ասկէ, վասնզի ասիկայ է իմ արիւնս նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար»:

Յիսուս բոլոր այս խօսքերը զրուցեց

իրը Աստուած եւ ոչ թէ իբր մարդ. եւ եթէ անիկայ Աստուած չէր, կամ յիմար մըն էր եւ կամ խաբեբայ մը: Բայց պիտի ըսէք թէ, ի՞նչպէս երկրի վրայ ապրող եւ քաղող մարդ մը կարելի է Աստուած կոչել: Նազովրեցիին թէ կատարեալ մարդ էր եւ թէ կատարեալ Աստուած: Իբր մարդ անիկայ ենթակայ էր մարդկային սահմանաւորումներու: Երբ անիկայ մարմին առաւ Աստուածային փառքէն մերկացաւ: «Անիկայ աստուծոյ կերպարանքը առնելով, յափշտակելու բան չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլալը, հապա անձը ունայնացուց, ծառայի կերպարանք առնելով. մարդոց նման ըլլալով... ինքզինք խոնարհեցուց: Բայց այդ խոնարհեցող Տէրը, իր յարութիւնէն յետոյ երկինք համբարձաւ, փառքով եւ զօրութեամբ պսակուեցաւ, եւ ամէն բանի վրայ թագաւոր եւ իշխան կարգուեցաւ: Յիսուսը Քրիստոս եղաւ, սահմանաւորեալը անսահմանին փոխադրուեցաւ: Համբարձումէն վերջ մարդկային ամէն բան թօթափեցաւ, և Աստուածայինի ինքզինք գտաւ: Ահա այս յարուցեալ եւ փառաւորեալ Քրիստոսն է որ կը պաշտենք իբր Աստուած:

Մարգարէին կողմէն կանխագուշակուած մանուկին տրուելիք չորրորդ անունը «Յաւիտենականութեան Հայր» է: Այս անունը բնական լաւելուածն է ասոր կանխող անունին: Ան որ «Հօգօր Աստուած» է ի հարկէ պէտք ըլլայ միեւնոյն ատեն «Յաւիտենական Հայր»: Որդին եւ Հայրը նոյն էութեան տարբեր երեւոյթներն են: Յիսուս իր երկրաւոր վիճակին մէջ խի, հօրը հետ կատարելապէս միացած ըլլալու գիտակցութիւնը ունէր: Անիկա յայտնապէս ըսաւ, «Ես եւ Հայրը մէկ ենք»: Ուրիշ առթիւ մը, Հայրը տեսնել ուզող Փիլիպպոսին պատասխանեց, «Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, եւ զիս չճանչցար, Փիլիպպոս. ան որ զիս տեսաւ, Հայրը տեսաւ»:

Խոստացուած մանուկին տրուելիք հինգերորդ անունը «Ողորդութեան Իշ-

խան» պիտի ըլլայ: Այս անունն ալ հիանալիօրէն կը չարմարի մեր Տիրոջը: Երբ Բեթլեհէմի մանուկը ծնաւ, երկնային զօրքերու բազմութիւն մը սա բառերով աւետեցին անոր զալուստը: «Բարձրութեան մէջ Աստուծոյ փառք, ու երկրի վրայ խաղաղութիւն, այն մարդոց մէջ որոնցմէ նա հաճոյ է»: Յիսուս աշխարհ եկաւ, որպէսզի աշխարհի մէջ խաղաղութեան թագաւորութիւնը հաստատէ, նախ մարդիկը Աստուծոյ հետ հաշտեցնելով. եւ յետոյ մարդիկը իրարու հետ ուղիղ յարաբերութեան մէջ դնելով: Մարդիկ երբէք ուղիղ յարաբերութեան մէջ պիտի չըլլան իրարու հետ, որքան ատեն որ Աստուծոյ հանդէպ ուղիղ դիրք մը բռնած չէին: Անկարելի է որ մարդիկ իրենց ընկերներուն հետ ներդաշնակութեամբ ու խաղաղութեամբ ապրին, մինչեւ որ իրենց հոգիները չներդաշնակաւորուին (attune) Աստուծոյ հետ: Յիսուս հոգիները դաշնակաւորելու պաշտօնով աշխարհ եկաւ: Անիկայ խանգարած ու մոլորած հոգիները շտկելու եւ փրկելու համար ապրեցաւ եւ խաչուեցաւ: Անիկայ իր հետեւորդներուն խոստացաւ ու ըսաւ, «Ողորդութիւն կը թողու՞մ ձեզի, իմ խաղաղութիւնս կուտամ ձեզի»:

Յիսուս ինքզինքը այս աշխարհին իշխանը անուանեց: Իր քահանայապետական ազօթքին մէջ ըսաւ. «Հայր դուն իրեն (որդւոյն) իշխանութիւն տուիր ամէն մարմնի վրայ»: Եւ իր յարութիւնէն վերջ սա խօսքերով բաժնուեցաւ իր աշակերտներէն, «Ամէն իշխանութիւն ինձի տրուեցաւ երկինքի ու երկրի մէջ: Ուրեմն զացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, մըկըրտեցէք զանոնք անուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ»: Յիսուս արքայական հրահանքներ եւ հրամաններ տուաւ: Անիկա թագաւորական յարգանք, հրնազանդութիւն եւ երկրպագութիւն պահանջեց: Նա յայտնեց թէ ինք է, «Ողորդութեան Իշխանը»:

Երբոր աշխարհ կը խոստովանի Յիսուսի իշխանութիւնը, կը համակերպի ա-

նոր օրինակին եւ խոհանրուն, եւ հր-
նազանդի անոր օրէնքներուն եւ հրաման-
ներուն, այն ատեն, եւ միայն այն ատեն,
խաղաղութիւն կ'ունենայ: Երբ ամէն մար-
մին անոր երկրպագութիւն կ'ընէ, եւ զայն
«Արքայ Տէր Ամենից» կը հռչակէ, յայն
ժամ աստիճութիւնները եւ թշնամութիւն-
ները կը վերջանան, եւ երկրիս վրայ ան-
բացատրելի խաղաղութիւն կը տիրէ: Ուս-
ղաղութեան խոստումը անոնց է, «որոնց-
մէ Աստուած հաճոյ է»: Ինքնամփոփ, նիւ-
թապաշտ, հաւատուրաց Աստուծոյ ուժա-
ցած մարդկութեան համար խաղաղութիւն
չկայ: Թէ որ աշխարհ հաւատաց Քրիս-
տոսի, խաղաղութիւն պիտի ունենայ: Իսկ
թէ որ չհաւատա՞յ: Այդ պարագային իր
ռովութիւններ, բաժանումներ, սուրբեր,
պատերազմներ, արիւնհեղութիւններ, սո-
վեր եւ այլն դժբաղդութիւններ: Տա-
ռապեալ եւ մոլորեալ աշխարհին սա է
գլխաւոր Տէրովը խօսքը, «գոնէ այս քու
օրունդ մէջ գիտնայիր քու խաղաղու-
վիայ տեղատարփի պէս պիտի գան խը-
թիւնդ. բայց հիմա ծածկուեցաւ քու աչ-
քերէդ»:

Դարեր առաջ Եսայի մարգարէանա-
լով ըսաւ. «Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ
մեզի որդի մը տրուեցաւ, եւ իշխանու-
թիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ, ու
անոր անունը պիտի կոչուի, Սքանչելի,
Որհնդակից, Հզօր Աստուած, Յաւիտե-
նականութեան Հայր, Ուղաղութեան Իշ-
խան»: Բեթլեհէմի մանուկին մէջ այս
մարգարէութիւնը գտաւ իր կատարեալ
լրացումը: Ծնունդի առթիւ այս հրաշալի
մանուկին ծննդեան տարեդարձը կը տօ-
նենք: Եւ ասիկայ է Ծննդեան պատգամը:
«Ով մարդկութիւն, ահա քու Արքայդ, որ
քեզի կուգայ: Ոոնարհէ անոր առջեւ, հա-
ւատայ անոր: Հիացիր անոր իբր «Ըսքան-
չելի». վստահէ անոր իբր «Որհնդակից».
պաշտէ զայն իբր «Հզօր Աստուած». յանձ-
նուէ անոր իբր «Յաւիտենականութեան
Հայր». եւ հնազանդէ անոր իբր «Ուս-
ղաղութեան իշխան»: Եւ ասանկով պիտի

վայելես երկնից աներեւակայելի բարեբ-
նեքը եւ օրհնութիւնները»:

Բ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

Թրոյ, Ն. Ե.

Ծանօթ. — Այս յօդուածը պատրաստուած
էր մեր Ծնունդի քիւիս համար, բայց ինչ-
պէս արդէն յիշեցիմք անկարելի եղաւ այն
մասնաւոր քիւր ժամանակին զրկել:

ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Հետեւեալ նամակը քանի մը օր ա-
ռաջ հասաւ խմբագրութեան: Թէեւ
նիւթը հին, բայց պարունակութիւնը
միշտ քարմ է, ուզեցիմք հրատարա-
կել:

Ծ. Խ.

Միշտ ժպտուն բաղդի մը գրկերուն
մէջ ծնած Հզօր ու ազնիւ աղգերուն, մեծ
տօնն է այսօր:

Ճոխ սեղաններ սարքուած: Ծնողքներ
մասամբ, հաւաքած իրենց թեւերուն տակ
թերեւս, կապարի ու թնդանօթի տեղա-
տարափէն վերապրող սիրելի ու հերոս
